Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
Economic Development and Research Center

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԻ

Ուսումնասիրություն

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիր
Budgets For Citizens

ԵՐԵՎԱՆ, 2023

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

«Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրն իրականացվում է Իրավաբանների հայկական ասոցիացիայի, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն և Ագորա Սենթրլ Յուրոփ կազմակերպությունների համագործակցությամբ, Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնմանը, խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացներին:

Ծրագրի շրջանակներում Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնն իրականացնում է ՔՀԿ-ների և երիտասարդ մասնագետների բուջետային գործընթացին մասնակցելու կարողությունների բարձրացման, բյուջետային գործընթացների վերաբերյալ քաղաքացիական հասարակության տեղեկացվածության մակարդակի բարելավման, բյուջետային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներին ՔՀԿ-ների արդյունավետ մասնակցության աջակցության միջոցառումներ, այդ թվում՝ Ծրագրի թիրախ ոլորտների (արդարադատություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն և գյուղատնտեսություն) բյուջետային տեղեկատվության պարզեցումներ, բյուջետային ուղեցույցների մշակում և այլն:

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC) հանրային ծրագրերի և քաղաքականությունների մոնիտորինգին և վերլուծությանն ուղղված ոչ առևտրային նախաձեռնություն է: 2001 թվականից ի վեր Կենտրոնն իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնցում բավականին մեծ դեր են ստացել առանձին ոլորտների քաղաքականությունների, ծրագրերի և բյուջեների վերլուծությունները: Կարևորելով հանրային միջոցներով հանրության համար իրականացվող ծրագրերի նպատակայնությունը, հասցեականությունը, իրականացման արդյունավետությունը և հանրության գոհունակությունը՝ Կենտրոնը փորձում է պրոֆեսիոնալ ներդրում ունենալ քաղաքականությունների մշակման և քննարկման գործընթացներում:

Սույն հրապարակումը նպատակ ունի համառոտ ամփոփել բյուջետային տեղեկատվության պարզեցված ներկայացման հիմնական գործիքակազմը, միջազգային և ՀՀ փորձը: Այն ուղղված է հանրության լայն շրջանակին՝ նպատակ ունենալով բարձրացնել իրազեկվածության մակարդակը, հիմքեր ստեղծել արդյունավետ երկխոսության համար:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել ՏԶՀԿ գրասենյակ՝ +374 (0) 55 540 289, info@edrc.am, www.edrc.am:

© ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՐԹԱԿՆԵՐ 6

2.1. Բյուջետային տեղեկատվության ներկայացումը հարկաբյուջետային տվյալների հարթակներում 7

2.2. Հարկաբյուջետային տեղեկատվությունը առցանց հարթակների միջոցով ներկայացման Կորեայի փորձը 11

2.3. Հարկաբյուջետային տեղեկատվությունը առցանց հարթակների միջոցով ներկայացման ԱՄՆ փորձը 14

2.4. Հարկաբյուջետային տեղեկատվությունը առցանց հարթակների միջոցով ներկայացման Ինդոնեզիայի փորձը 16

3. ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵ 18

3.1. Ինչպիսի տեղեկտվություն պետք է պարունակի Քաղաքացու Բյուջեն 19

3.2. Քաղաքացու Բյուջեի ձևաչափերը 20

3.3. Երբ թողարկել Քաղաքացու Բյուջեն 21

3.4. Ինչպես բաշխել Քաղաքացու Բյուջեն 21

4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՓՈՐՁԸ ՀՀ-ՈՒՄ 22

5. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀՀ-ՈՒՄ 28

Նկարների ցանկ **30**

Գծապատկերների ցանկ **30**

Աղյուսակների ցանկ **30**

Օգտագործված գրականություն **31**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԳՄՀԸ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության
ԵՄ	Եվրոպական միություն
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՏՀ	Հաճախ տրվող հարցեր
ՄԲ	Մեծ Բրիտանիա
ՄԲԳ	Միջազգային Բյուջետային Գործընկերություն
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթղթի նպատակը բյուջետային տեղեկատվության պարզեցված ներկայացման հիմնական գործիքակազմի, ինչպես նաև միջազգային և ՀՀ փորձի ուսումնասիրությունը և ներկայացումն է: Այն հնարավորութուն կտա ՀՀ քաղաքացիներին և քաղաքացիական հասարակությանը լինել իրազեկ, ծանոթանալ և օգտագործել առկա տեղեկատվական աղբյուրները, ինչպես նաև արդյունավետ երկխոսության հիմքեր կստեղծի:

Բյուջետային տեղեկատվության մատչելի ներկայացումը կարևոր բաղադրիչ է բյուջեի և, ընդհանրապես, հարկաբյուջետային թափանցիկության (budget and fiscal transparency), հաշվետվողականության և մասնակցության բարելավման տեսանկյունից:

Հայտնի է, որ բյուջետային փաստաթղթերը, սովորաբար, պարունակում են մեծ քանակությամբ թվային և տեխնիկական տեղեկատվություն, մասնագիտական տերմիններ, որը ընթերցողին ոչ միշտ է հասկանալի: Հետևաբար կառավարությունները պետք է ապահովեն, որ քաղաքացիները հստակ պատկերացում ունենան բյուջետային ռեսուրսների ծախսման ուղղությունների և ծավալների մասին, քանի որ այն անմիջականորեն ազդում է նրանց բարեկեցության և որոշումների վրա: Բյուջետային տեղեկատվությունը ներկայացնելով ավելի մատչելի ձևաչափով, քան բյուջեի մասին օրենքն է, կամ մյուս պաշտոնական փաստաթղթերն են, կառավարությունները բարձրացնում են պետական ֆինանսների կառավարման մասին հասարակության ընկալումը և կառավարության նկատմամբ վստահությունը:

Մյուս կողմից՝ քաղաքացիները իրավունք ունեն տեղեկանալու, թե ինչպես են հավաքագրվում և ինչ ուղղություններով են ծախսվում պետական ռեսուրսները: Պարզ և մատչելի բյուջետային տեղեկատվության առկայությունը հնարավորություն կտա որպես տեղեկացված շահառուներ մեծացնել հասարակության մասնակցությունը բյուջետային գործընթացներում և կառավարությանը պահել հաշվետու:

Ուսումնասիրությունը քննարկում և անդրադառնում է բյուջետային տեղեկատվության պարզ և մատչելի, քաղաքացու համար ընկալելի ներկայացման առավել տարածված և կիրառելի երկու գործիքներ՝

- **հարկաբյուջետային պորտալներ կամ հարթակներ,**
- **քաղաքացու բյուջեներ կամ բյուջետային ուղեցույցներ**:

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՐԹԱԿՆԵՐ

Ժամանակին համընթաց կառավարությունները հանդիսանալով Բաց Կառավարությունների Գործընկերության անդամ կամ ելնելով ազգային ռազմավարական նպատակներից, ավելի ու ավելի են կարևորում հարկաբյուջետային թափանցիկությունը, որին ուղղված կարևոր նախաձեռնություն է բաց ծախսերի, բյուջեների կամ հարկաբյուջետային տվյալների պորտալների մշակումը:

Բյուջետային տվյալների հարթակների/պորտալների հիմնական առաքելությունը հարկաբյուջետային տվյալները մեկ միասնական աղբյուրից հասանելի դարձնելն է: Տվյալների պորտալները կարող են օգտակար լինել ինչպես կառավարության շրջանում ներքին օգտագործման համար, այնպես էլ՝ արտաքին: Վերջիններս նաև հանդիսանում են տեխնոլոգիական կարևոր գործիք հանրային ծախսերի մոնիթորինգի և կառավարման, հանրային մասնակցության ընդլայնման համար: Տարբեր կառավարություններ տարբեր մոտեցումներ են դնում բյուջետային տվյալների պորտալների ստեղծման հիմքում:

Կառավարություններին այս գործընթացում աջակցելու նպատակով ձևավորվել և իրականացվել են միջազգային տարբեր նախաձեռնություններ և ծրագրեր:

Հարկաբյուջետային թափանցիկության և մատչելիության բարելավման նպատակով՝ Բաց գիտելիքի հիմնադրամի (Open Knowledge Foundation), Հարկաբյուջետային թափանցիկության համաշխարհային նախաձեռնության (GIFT) և Համաշխարհային բանկի ջանքերով ստեղծվել է **Բաց հարկաբյուջետային տվյալների փաթեթ (OFDP)** ծրագրային գործիքը: Վերջինս ծրագրային շրջանակ է, որն առաջարկում է հարկաբյուջետային տեղեկատվությունը բաց տվյալների տեսքով ներկայացման ստանդարտներ[1]:

Ծրագրային փաթեթի շրջանակներում ստեղծվել է նաև **Բաց Ծախսերի գործիքը (OpenSpending)**, որը անվճար և բաց հարթակ է հարկաբյուջետային տվյալների որոնման, վիզուալացման և վերլուծության համար: Այն հնարավորություն է տալիս կառավարություններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և համայնքներին հրապարակել և վիզուալացնել իրենց բյուջետային տեղեկատվությունը (եկամուտներ, ծախսեր և գնումների տվյալներ) բաց հարթակում[2]: 2017 թվականին Մեքսիկան առաջին երկիրն էր, որը բյուջետային տվյալները հրապարակել է՝ կիրառելով այս գործիքը (**www.datos.cdmx.gob.mx**)[3]:

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող Հորիզոն 2020 ծրագրի շրջանակներում նախաձեռնված **OpenBudgets.eu** հարթակը[4] առաջարկում է կոնկրետ գործիքակազմ աջակցելու հարկաբյուջետային թափանցիկության ապահովմանը, պետական կառավարման մարմինների հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը և հնարավոր

[1] https://community.openspending.org/about/fiscaldatapackage/
[2] https://community.openspending.org/about/
[3] https://fiscaltransparency.net/mexico-became-the-first-country-to-formally-adopt-the-open-fiscal-data-package/
[4] Lämmerhirt, D. "Making budgets attractive – Best practices from governments' financial transparency portals". Sankt Augustin, Germany: OpenBudgets.eu

կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: Հիմնվելով եվրոպական երկրների և եվրոպական ինստիտուտների լավագույն փորձի վրա՝ OpenBudgets.eu-ն ներկայացնում է բյուջետային տվյալների պորտալների ստեղծման հիմնական մոտեցումները և գործիքները՝ հարկաբյուջետային տվյալների հավաքագրումից մինչև տվյալների պարզեցված ներկայացում, համադրում և վերլուծում:

2.1. Բյուջետային տեղեկատվության ներկայացումը հարկաբյուջետային տվյալների հարթակներում

Բյուջետային տվյալների հարթակների/պորտալների ձևավորման հիմքում բյուջետային տեղեկատվության վերլուծության և ներկայացման մոտեցումների համադրումն է: Ընդհանրապես բյուջետային տեղեկատվությունը կարող է վերլուծվել և ներկայացվել տարբեր տեսանկյուններից և տարբեր ձևաչափերով: Ստորև ներկայացված են վերլուծության այն հիմնական մոտեցումները, որոնք կարևոր են հատկապես բյուջետային հարթակների նախագծման տեսանկյունից:

- **Տարածաշրջանային համեմատություն.** կարելի է համեմատել առանձին կառավարությունների բյուջեները կամ կոկրետ երկրի ներսում տարածաշրջանային/տեղական բյուջեները: Եթե երկրների միջև համադրում իրականացնելիս համեմատվում են կառավարությունների բյուջեները, ապա մեկ երկրի ներսում տարածաշրջանային/տեղական համեմատություն իրականացնելիս կարող են դիտարկվել և՛ կառավարության բյուջեից (պետական/կենտրոնական) տարածաշրջանային միավորներին ուղղվող հատկացումները, և՛ առանձին տարածաշրջանների (տեղական) բյուջեները: Կառավարության բյուջեների/հարկաբյուջետային պորտալներում կարելի է հանդիպել ինչպես երկրների միջև (հիմնված ԱՄՀ-ի, ՀԲ-ի, ԵՄ-ի, ՏՀԶԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների տվյալների վրա), այնպես էլ կառավարության բյուջեից առանձին տարածաշրջաններին ուղղվող համադրումներ: Որոշ օրինակներ ներկայացված են ստորև նկարում:

Նկար 1. Հարկաբյուջետային տվյալների պորտալներում տարածաշրջանային բյուջեների համեմատության օրինակներ



ԵՄ քաղաքականության ֆոնդերի հատկացումներն ըստ երկրների
Աղբյուրը՝ COHESION OPEN DATA PLATFORM www.cohesiondata.ec.europa.eu



- **Բյուջետային ծախսերի ներկայացում ըստ առանձին դասակարգումների**: Բյուջետային ծախսերը կարող են խմբավորվել ըստ՝
    - քաղաքականության նպատակների - ծրագրային դասակարգում,
    - ոլորտների/բնագավառների – գործառական դասակարգում,
    - բյուջետային ռեսուրսները ստացող և ծախսող, մարմինների/կազմակերպությունների – գերատեսչական դասակարգում,
    - ծախսերի բնույթի – տնտեսագիտական դասակարգում:

Սովորաբար բյուջետային պորտալներում ծախսերի ներկայացման համար վերոնշյալ դասակարգումներից ոչ բոլորն են կիրառվում: Առավել հաճախ հանդիպում է ծախսերի բաշխումն ըստ գործառական դասակարգման, ինչը բացատրվում է նրանով, որ քաղաքացիների համար քաղաքականության ոլորտային բաշխումն ավելի հետաքրքիր է, քան, օրինակ՝ գերատեսչականը: Երբեմն պորտալներում ծախսերի բաշխումը ներկայացվում է գործառական և գերատեսչական դասակարգումների խաչմամբ:

Արագոնի ինքնավար հանրապետության[5] պորտալում բյուջետային ծախսերը ներկայացված են միաժամանակ և՛ գործառական, և՛ տնտեսագիտական, և՛ գերատեսչական դասակարգումներով (տե՛ս նկար 2):

[5] Ինքնավար համայնք Իսպանիայում:

Նկար 2. Արագոնի ինքնավար հանրապետության բյուջետային ծախսերի ներկայացումն ըստ առանձին դասակարգումների



Աղբյուրը՝ www.presupuesto.aragon.es

- **Բյուջետային տեղեկատվության ներկայացում հիերարխիկ կառուցվածքով:** Բյուջեի յուրաքանչյուր մակարդակ կարելի է բացել և ներկայացնել ենթամակարդակների միջոցով՝ ավելի մանրամասնելով տրամադրվող տեղեկատվությունը:

Գծապատկեր 1. Բյուջետային տեղեկատվության հիերարխիկ կառուցվածքով ներկայացնելու օրինակ



- **Բյուջետային տեղեկատվության ներկայացում ըստ ժամանակագրության:** Կարող են համադրվել տարբեր տարիների բյուջեներն ըստ առանձին կատեգորիաների:

Գծապատկեր 2. Բյուջետային տեղեկատվության ըստ ժամանակագրության ներկայացման օրինակ



Բյուջետային պորտալներում տվյալների ներկայացման ձևաչափերը տարբեր են. տեղեկատվությունը կարող է ներկայացվել վիզուալացված՝ գծապատկերների և աղյուսակների միջոցով, տվյալների բազաների և մետատվյալների տեսքով, ինչպես նաև՝ մեքենաընթեռնելի տարբեր ֆորմատներով:

Պորտալը կարող է ներառել ինչպես բուն բյուջետային տեղեկատվությունը՝ ծախսեր, եկամուտներ, դեֆիցիտ և պարտք, այնպես էլ՝ հարկաբյուջետային/ֆինանսական վիճակագրական տվյալներ, միջազգային համադրումներ և այլն:

2.2. Հարկաբյուջետային տեղեկատվությունը առցանց հարթակների միջոցով ներկայացման Կորեայի փորձը

Հանրային տվյալների բացության և օգտագործման մակարդակի ընդլայնման տեսանկյունից հատկապես կարևոր է ուսումնասիրել Հաարավային Կորեայի փորձը: Այս երկրում հարկաբյուջետային տեղեկատվության մատչելիության և հասանելիության ապահովումը, ինչպես նաև բյուջետային գործընթացներին քաղաքացիների մասնակցության ապահովումն իրականացվում է մի քանի առցանց պորտալների միջոցով:

«Բաց կառավարության տվյալների» պորտալը (www.data.go.kr) ներառում է պետական հատվածի բոլոր կազմակերպությունների կողմից ստեղծված, ձեռք բերված և կառավարվող տվյալներ (այդ թվում՝ ֆինանսական): Այն ներկայացնում է տվյալներ տարբեր ձևաչափերով (տվյալների բազա, բաց հավելվածի ծրագրավորման ինտերֆեյս (API), վիզուալիզացիա) և ապահովում է տեղեկատվության հեշտ պատկերացում ու որոնում:

Կորեայի կառավարության կողմից 2007 թվականին ներդրված ֆինանսական տեղեկատվության կառավարման համակարգը (Dbrain) թվային բյուջետավորման առաջատար և նորարարական մոտեցում է: Այն ոչ միայն ներկայացնում է տվալներ, այլև՝ մասնակցային բյուջետավորման համակարգ է, որն ապահովում է քաղաքացիների մասնակցությունը բյուջեի ողջ ցիկլի ընթացքում՝ պատրաստումից մինչև աուդիտ:

Համակարգի (Dbrain) արդիականացված և ամբողջովին նորացված տարբերակը (Dbrain+) գործարկվել է 2022 թվականի դեկտեմբերին: Վերջինս ավելի հուսալի և արդյունավետ համակարգ է, որը փոխկապակցված է այլ թվային կառավարման և հանրային հաստատությունների համակարգերի հետ:

Dbrain+-ը բաղկացած է բիզնես համակարգերի 24 միավորներից, ինչպիսիք են՝ բիզնեսի կառավարումը, բյուջեի բաշխումը և կատարումը, հաշվապահական հաշվառումը և վիճակագրական վերլուծությունը, ինչպես նաև փոխկապակցված արտաքին համակարգերը: Կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ինստիտուտների աշխատակիցները մուտք են գործում համակարգեր Ֆիսկալ Պորտալի (Fiscal Portal) միջոցով՝ իրենց աշխատանքը կատարելու համար: Այս գործընթացների ընթացքում արտադրված հիմնական հարկաբյուջետային տեղեկատվությունը հանրությանը տրամադրվում է **հարկաբյուջետային տվյալների պորտալում (www.openfiscaldata.go.kr)**[6]:

[6] https://www.openfiscaldata.go.kr/op/en/ug/UOPENUGA10

Նկար 3. Կորեայի բաց հարկաբյուջետային տվյալների պորտալը



Աղբյուրը՝ www.openfiscaldata.go.kr

Հարկաբյուջետային տվյալների պորտալում պարզեցված, առանձին բաժիններով ներկայացվում է հանրային ֆինանսների համակարգը և պարզեցված ձևաչափով տրամադրվում է հակաբյուջետային համապարփակ տեղեկատվություն բոլոր ուղղություններով՝ ներառյալ ազգային և միջազգային համեմատական վիճակագրություն: Պորտալի կառուցվածքը ներկայացված է ստորև աղյուսակում:

Աղյուսակ 1. Հարկաբյուջետային տվյալների պորտալի կառուցվածքը

Հարկաբյուջետային ամփոփագիր		
Բաց հարկաբյուջետային տվյալներ Համախմբված հարկաբյուջետային տվյալներ Ազգային ֆինանսական համակարգի ներկայացում	Կենտրոնական ֆինանսներ Տեղական ֆինանսներ Տեղական կրթության ֆինանսներ[7]	
Հիմնական ցուցանիշներ		
Կորեայի 100 ցուցանիշներ Կորեայի վիճակագրական ցուցանիշներ	ՏՀԶԿ Ազգային հաշիվների համակարգ ԱՄՀ Կառավարության ֆինանսական վիճակագրություն Մեծ 20-յակի (G20) վիճակագրություն	
Հարկաբյուջետային տվյալներ		
• Կառավարության հարկաբյուջետային հաշվեկշիռ • Կառավարության եկամուտներ • Կառավարության ծախսեր • Հիմնական ֆինանսական վիճակագրություն • Ընդհանուր եկամուտներ • Հարկային եկամուտներ • Եկամուտների ամսական միտում • Հարկային եկամուտների ամսական միտում	• Ընդհանուր ծախսեր • Ծախսերն ըստ բաժինների • Պարտադիր/հայեցողական ծախսեր • Ծախսերն ըստ նախարարությունների • Ծախսերն ըստ տարածաշրջանների • Ծախսերն ըստ տեսակների • Բյուջեի հավելուրդ/պակասորդ • Ծախսերի ամսական միտում • Հարկաբյուջետային հաշվեկշռի ամսական միտում	• Համախմբված հարկաբյուջետային հաշվեկշիռ • Համախմբված հարկաբյուջետային հաշվեկշիռ առանց հիմնադրամների • Սոցիալական ապահովության հիմնադրամի հաշվեկշիռ • Ազգային սեփականություն • Ազգային պարտք • Կառավարության պարտավորություններ • Հանրային հատվածի պարտավորություններ
dBrain համակարգի մասին		
Ծանուցումներ,	**ՀՏՀ**	**Օգտակար հղումներ**

Աղբյուրը՝ www.openfiscaldata.go.kr

[7] Արտաբյուջետային հիմնադրամ է:

Ֆիսկալ պորտալի հիմնական առանձնահատկություններն են.

- Ինտեգրված վեբ համակարգ է, որն ապահովում է հանրությանը կառավարության հարկաբյուջետային գործունեության վերաբերյալ վերլուծական և ակտուալ տեղեկատվությամբ:
- Մասնակցային բյուջետավորման գործիք է, որի միջոցով կառավարությունը և տեղական կառավարման մարմինները, հանրային ինստիտուտները և հանրությունը համատեղ մասնակցում են ռեսուրսների բաշխման և հարկաբյուջետային որոշումների կայացման գործընթացին:
- Համակարգը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականություն վարել՝ ապահովելով հանրությանը և քաղաքականություն մշակողներին բյուջետային ծախսերի վերահսկման համար անհրաժեշտ տեղեկատվությամբ:[8]

Մեկ այլ պորտալի՝ **e-Participation Portal (www.epeople.go.kr),** միջոցով քաղաքացիները հնարավորություն ունեն մասնակցել բյուջետավորման գործընթացին առցանց հարցումների, քվեարկությունների, ինչպես նաև՝ քաղաքականությունների վերաբերյալ առաջարկությունների, նախաձեռնությունների և հնարավոր չարաշահումների վերաբերյալ բողոքների ներկայացման միջոցով[9]:

Նկար 4. Կորեայի քաղաքացիների մասնակցության պորտալը



Աղբյուրը՝ www.epeople.go.kr

Բյուջեի Չարաշահումների Հաշվետվությունների Կենտրոնը (Budget Waste Report Center) համակարգում է քաղաքացիների կողմից թեժ գծի և առցանց համակարգի միջոցով կենտրոնական և տեղական կառավարման մարմինների չարաշահումների վերաբերյալ ներկայացված բողոքները: Եթե քաղաքացիների կողմից ենթադրյալ յուրացումների մասին

[8] Gigler et al. "Technologies for Transparency and Accountability: Implications for ICT policy and Implementation", 2011.

[9] Ministry of the Interior, Republic of Korea, "Korea, Leading the world -Government", Introduction and Analysis on Best Practice.

ներկայացված տեղեկատվությունը ճշմարիտ է, այդ դեպքում քաղաքացիներին տրամադրվում է «բյուջեի խնայողության խրախուսական բոնուս» (budget saving incentive bonus)՝ առավելագույնը 30,000 ԱՄՆ դոլարի չափով[10]:

Ցանկացած քաղաքացի հնարավորություն ունի առցանց, փոստով կամ անձամբ ներկայացնելու բյուջետային ցանկացած նոր ծրագրի նախաձեռնություն, որոնք համակարգվում են Էկոնոմիկայի և Ֆինանսների նախարարության (Ministry of Economy and Finance) կողմից: Գործընթացն իրականացվում է ըստ հետևյալ փուլերի.

- նախաձեռնությունների հավաքագրում,
- ընդունված նախաձեռնությունների բաշխում ըստ ուղղությունների և քննարկում համապատասխան նախարարություններում,
- ոլորտային քաղաքականություններին համապատասխան ընտրված նախաձեռնությունների ներկայացում Քաղաքացիների Կոմիտեի (Citizen's Committee) ներկայացուցիչների և կոմիտեին կցված փորձագետների քննարկմանը,
- կոմիտեի 400 անդամների և առցանց մասնակցող 2,000 անձանց քվեարկությամբ ընտրված նախաձեռնությունների ներառում բյուջեի նախագծում և ներկայացում օրենսդիր մարմնի հաստատմանը:

2020 թվականի բյուջեում ներառվել են մոտ 2 ամսվա ընթացքում ներկայացված 1,399 նախաձեռնություններից 38-ը՝ 93 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ֆինանսավորմամբ[11]:

2.3. Հարկաբյուջետային տեղեկատվությունը առցանց հարթակների միջոցով ներկայացման ԱՄՆ փորձը

ԱՄՆ-ում 2014 թվականին ընդունվել է Թվային հաշվետվողականության և թափանցիկության մասին օրենքը, որով տվյալների որակը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը բարելավելու համար սահմանվել են ֆինանսական տվյալների նոր դաշնային ստանդարտներ և գործակալությունների հաշվետվության նոր մեխանիզմներ: Այս օրենքի ընդունման արդյունքում սահմանվել են հիմքեր ֆինանսական համակարգի գործակալությունների և դաշնային բյուջեից պայմանագրերի կամ ֆինանսական որևէ աջակցության տեսքով ֆինանսավորում ստացող ոչ պետական մարմինների տվյալների փոխկապակցման համար, ինչն էլ իր հերթին հնարավոր է դարձրել ստեղծել վերոնշյալ տվյալները կապակցող մոդել: Այդ տեղեկատվությունը հանրությանը հասանելի և մատչելի դարձնելու նպատակով ստեղծվել է կառավարության ծախսերի տվյալների պորտալը՝ www.usaspending.gov:

Կայքը հնարավորություն է տալիս ստանալ անհրաժեշտ տվյալները վիզուալացված՝ ինտերակտիվ գծապատկերների և աղյուսակների միջոցով, ինչպես նաև ներբեռնել որպես տվյալների բազա կամ մետատվյալ JSON ֆորմատով:

[10] Gigler et al. “Technologies for Transparency and Accountability: Implications for ICT policy and Implementation”, 2011.
[11] https://www.oidp.net/docs/repo/doc636.pdf

Պորտալում առկա են տվյալների ստացման հետևյալ հնարավորությունները.

- **«Explorer» գործիքը** թույլ է տալիս բյուջեի ծախսերը տեսնել ըստ գործառական, գերատեսչական և տնտեսագիտական դասակարգումների՝ ավելի մեծ բյուջետային կատեգորիաներից անցնելով ավելի փոքր կատեգորիաների (նկար 6):
- **«Advanced Search»** գործիքը հնարավոր է դարձնում որոնել տվյալները՝ ֆիլտրելով ըստ տարբեր կատեգորիաների (օրինակ՝ ժամանակահատված, ծախսերի տեսակ, գործակալություն և այլն):
- **Գործակալությունների պրոֆիլներով** հնարավոր է ուսումնասիրել համապատասխան գործակալության հաշվի ծախսերի, այդ թվում՝ ոչ պետական մարմինների հետ կնքված պայմանագրերը, տրամադրված վարկերը և դրամաշնորհների ամփոփագրերը:

Նկար 5. ԱՄՆ-ի կառավարության ծախսերի տվյալների պորտալի «Explorer» գործիքը



Աղբյուրը՝ www.usaspending.gov

- **Դաշնային հաշվի պրոֆիլներով** կարելի է ուսումնասիրել ընթացիկ ֆինանսական տարում որոշակի դաշնային հաշիվների ծախսերի ամփոփագրերը:
- **Նահանգների կամ տարածաշրջանների պրոֆիլներով** հնարավոր է ուսումնասիրել պարգևատրման ծախսերի ամփոփագրերն ըստ նահանգների:
- **Ֆինանսավորում ստացողների պրոֆիլներով** հնարավոր է ուսումնասիրել ֆինանսավորման (պայմանագրերի, դրամաշնորհների, փոխառությունների կամ այլ ֆինանսական օգնության տեսքով) ամփոփագրերը:

Պորտալում չեն հրապարակվում միայն գործող օրենքներով և կանոնակարգերով հանրայնացման ոչ ենթակա տվյալները, մասնավորապես՝

- անձնական տվյալներ,
- ազգային անվտանգությունը վտանգող տվյալներ,
- ֆինանսական պայմանագրերի (Award) կողմերի գույքային տեղեկատվություն կամ փաստաթղթեր:

Քաղաքացիների համար դաշնային բյուջեի տեղեկատվությունը առավել մատչելի դարձնելու համար ԱՄՆ գանձապետարանի՝ ֆինանսների նախարարության Հարկաբյուջետային

ծառայության բյուրոյի կողմից գործարկվել է **Ֆիսկալ տվյալների պորտալը (www.fiscaldata.treasury.gov):**

Պորտալի հիմնական առանձնահատկություններն են[12՝]

- **Մարդակենտրոն դիզայն.** Կայքը ժամանակակից ֆորմատներով, քաղաքացու համար հեշտ օգտագործելի է:
- **Մեքենաընթեռնելի ֆորմատներով տվյալներ.** Կայքում առկա բոլոր բազաները հասանելի են մեքենաընթեռնելի մի քանի ձևաչափերով: Ընդ որում, բոլոր բազաները մետատվյալներ են և ներառում են տվյալների թարմացման ժամկետը, յուրաքանչյուր տողի, սյան և աղյուսակի բացատրությունը:
- **Հեշտ հասանելի հավելվածի ծրագրավորման ինտերֆեյս (API)** բոլոր բազաների համար:

Նկար 6. ԱՄՆ ֆիսկալ տվյալների պորտալը



Աղբյուրը՝ www.fiscaldata.treasury.gov

Ֆիսկալ տվյալների պորտալը մանրամասն ներկայացնում է այդ տարվա բյուջեն՝ ծախսերը, եկամուտները, դեֆիցիտը և պարտքը, և համեմատականը նախորդ տարվա նկատմամբ, ինչպես նաև՝ պարունակում է հարկաբյուջետային տվյալների բազաներ տարբեր ֆորմատներով:

2.4. Հարկաբյուջետային տեղեկատվությունը առցանց հարթակների միջոցով ներկայացման Ինդոնեզիայի փորձը

Ինդոնեզիայի ազգային բյուջեն ներկայացնող տվյալների պորտալը ստեղծվել է 2017 թվականին՝ որպես Ազգային բյուջեն հասարակության կողմից վերահսկելու (մոնիթորինգի) գործիք:

[12] https://fiscaldata.treasury.gov/about-us/

Նկար 7. Ինդոնեզիայի Ազգային բյուջեի տվյալների պորտալը



Աղբյուրը՝ www.data-apbn.kemenkeu.go.id

Պորտալում հասանելի են՝

- Ինդոնեզիայի Ազգային բյուջեի տվյալների քարտեզը, որը ներառում է կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության բյուջեների թիրախները և ձեռքբերումները՝ հնարավորություն տալով ծախսերը ներկայացնել նաև տարածաշրջանային բաշխմամբ:
- Տվյալների շարքեր,
- Տվյալներ, որոնք ներկայացնում են տարբեր զարգացման ծրագրերի, բյուջետային փաստաթղթերը, համապատասխան օրենքները և կառավարության կարգավորումները:[13]

Պորտալում պարզապես ներկայացված են բյուջետային տարբեր մակարդակի տվյալներ և բյուջետային տեղեկատվություն: Այն չի առաջարկում քաղաքացիների առցանց մասնակցության և երկխոսության գործիքներ:

[13] Open Budgeting Practices in the Asia and Pacific Region, April 2021, pages 24-25.

3. ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵ

«Քաղաքացու բյուջեն» կամ «Պետական բյուջեի քաղաքացու ուղեցույցը» սահմանվում է որպես տարեկան բյուջեի հասարակության տեսանկյունից կարևոր տեղեկատվության և պետական ծախսերի հիմնական ուղղությունների պարզ և ամփոփ նկարագրություն: Այն առանձին փաստաթուղթ է, որը մեկնաբանում է, թե որոնք են տարեկան բյուջեի հիմնական առաջարկությունները և ինչպիսին կլինեն դրանց հետևանքները հասարակության համար:

Քաղաքացու ուղեցույցի հրապարակմամբ կառավարությունը հնարավորություն է ստանում պարզ, ոչ մասնագիտական լեզվով բացատրել իր բյուջետային նպատակադրումները և առաջիկա տարվա գործունեության ուղղությունները: Ուղեցույցը վերլուծական հրապարակում է, որը հասարակությանը հնարավորություն է ընձեռում տեղեկանալ բյուջեի հիմնական հատկանիշներին, ինչպես նաև ապահովում է տեղեկատվության առավել մանրամասն աղբյուրների հասանելիություն: Այն օգնում է քաղաքացիներին գնահատել իրականացվող քաղաքականությունների ազդեցությունը հասարակության տարբեր խմբերի վրա: ՈՒղեցույցը չնայած կարող է պարունակել հղումներ առավել մանրամասն աղբյուրների, սակայն երբեք չպետք է ուղղորդի տեղեկատվությունը ստանալ այդ աղբյուրներից կամ հասկանալի դառնալ միայն դրանց բովանդակությանը ծանոթ լինելուց հետո: Ուղեցույցում ներկայացված տեղեկատվությունը և դրա ներկայացումը պետք է բավարար լինի ընթերցողին՝ այն հասկանալու և ընկալելու համար:

Քաղաքացու բյուջեն ուղղված է հանրային լայն շրջանակի: Այն, որպես կանոն, պետք է գրված լինի մատչելի լեզվով և ներառի վիզուալ տարրեր, որոնք կօգնեն ոչ մասնագետ ընթերցողներին հեշտությամբ հասկանալ տեղեկատվությունը:

Քաղաքացու բյուջեն կարող է մշակվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) կամ շահերի պաշտպանության այլ խմբերի կողմից, սակայն պետք է թողարկվի և բաշխվի կառավարության կողմից, քանի որ այն կոչված է ինստիտուցիոնալացնելու կառավարության՝ «իրականացվող քաղաքականության թափանցիկության և մատչելիության ապահովման» պարտավորությունը:

Կառավարությունները պետք է ապահովեն, որ քաղաքացիները հստակ պատկերացում ունենան բյուջեի մասին, քանի որ այն անմիջականորեն ազդում է նրանց վրա: Բյուջետային տեղեկատվությունը ներկայացնելով ավելի մատչելի ձևաչափով, քան բյուջեի մասին օրենքն է, կամ մյուս ստանդարտ փաստաթղթերն են, Քաղաքացու բյուջեն բարձրացնում է պետական ֆինանսների կառավարման մասին հասարակության ընկալումը:

Քաղաքացու բյուջեները պետք է ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու հնարավորություն ընձեռեն: Դրանք նախատեսված չեն բյուջետային փաստաթղթերին փոխարինելու, այլ ուղղված են քաղաքացիներին և քաղաքացիական հասարակությանը այնպիսի տեղեկատվության տրամադրմանը, որը հնարավորություն կտա քաղաքացիներին, որպես տեղեկացված շահառուներ, մեծացնել իրենց մասնակցությունը և կառավարությանը պահել հաշվետու:

Քաղաքացու տեսանկյունից, Քաղաքացու բյուջեն կարող է համարվել ամենակարևոր փաստաթուղթը, քանի որ այն կառավարության կողմից թողարկված միակ բյուջետային փաստաթուղթն է, որը մշակված է հենց քաղաքացու համար: Ներկայում բյուջետային փաստաթղթերը լի են մեծ քանակությամբ թվային և տեխնիկական տեղեկատվությամբ, մասնագիտական տերմինալոգիայով, որը սովորական ընթերցողի համար հասկանալի չէ:

Քաղաքացու բյուջեն կարևոր գործիք է կառավարության թափանցիկության բարձրացման և քաղաքացիների մասնակցության խթանման համար:

3.1. Ինչպիսի տեղեկտվություն պետք է պարունակի Քաղաքացու Բյուջեն

Քաղաքացու բյուջեները մեծապես տարբերվում են իրենց ֆոքուսի, բովանդակության և ծավալի առումով: Չնայած սրան, Քաղաքացու բյուջեն, ընդհանուր առմամբ, պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

- **Ներածություն.** Ներկայացվում է ուղեցույցի տպագրման նպատակը, համառոտ նկարագրություն բյուջեի և բյուջետային գործընթացի ծածկույթի վերաբերյալ, ներառյալ՝ քաղաքացիների/հասարակության մասնակցության հնարավորությունների:
- **Բյուջեի հիմքում ընկած տնտեսական կանխատեսումները.** Տնտեսական աճի և ինֆլյացիայի սպասումները, ինչպես նաև բյուջեի դեֆիցիտի/ավելցուկի կանխատեսումները:
- **Եկամուտերի հավաքագրումը.** Վերլուծություն, որտեղից են կառավարության ֆինանսական միջոցները, այսինքն՝ եկամուտների կառուցվածքի վերլուծություն:
- **Ծախսային ուղղությունները.** Ինչպես են ծախսվելու հանրային ֆինանսները և ինչու են ծախսվելու կոնկրետ ուղղություններով:
- **Կարևոր նախաձեռնություններ.** Եկամուտների կամ ծախսերի նշանակալի աճերի և գերակայությունների բացատրություն:
- **Ոլորտային հատուկ տեղեկատվություն.** Նպատակային և կարևոր ծրագրերի մասին տեղեկատվություն:
- **Բյուջետային տերմիններ**
- **Կապի տվյալներ:**

Քաղաքացու բյուջեները կարող են պարունակել նաև տեղեկություն այն մասին, թե ինչպես է բյուջեն ձևավորվում և իրականացվում, և ով է պատասխանատու բյուջետային գործընթացի յուրաքանչյուր փուլում: Բացի այդ, նրանք կարող են ներկայացնել կառավարության ոլորտային քաղաքականություններն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, սոցիալական պաշտպանությունը և պարզաբանել, թե կառավարման որ մակարդակը (պետական, տեղական) որ ծառայությունների համար է պատասխանատու:

Քաղաքացու բյուջեն պետք է կենտրոնանա բյուջեի նպատակների և բովանդակության վրա, այլ ոչ թե դրանց ընթացքի: Թեև կարևոր է, որ հասարակությունը լայն պատկերացում

ունենա, թե ինչպես է կառավարությունը մշակում տարեկան բյուջեն, սակայն ուղեցույցի հիմնական դերը պետք է մնա բյուջեի էության ներկայացումը:

Անկախ ձևաչափից, առաջնայինը պետք է լինի բյուջեի մասին տեղեկատվությունը ներկայացնել հակիրճ և հասկանալի ձևով: Քաղաքացու բյուջեն պետք է մշակվի երկրի բոլոր պաշտոնական լեզուներով, տարածվի լայնորեն և հասանելի լինի գրեթե նույն ժամանակում, երբ ինքը՝ բյուջեն է:

Քաղաքացու բյուջե մշակելիս կառավարությունը պետք է խորհրդակցի քաղաքացիական հասարակության, նաև քաղաքացիների հետ՝ պարզելու, թե որն է առավել օգտակար տեղեկատվությունը և ինչպես այն ներկայացնել: Ստորև ներկայացվում է հարցերի այն շրջանակը, որոնց շուրջ հասարակության կարծիքի ուսումնասիրությունը՝ կառավարությունների կողմից պիտի կարևորվի.

- Որքանո՞վ եք հետաքրքրված պետական բյուջեով,
- Ո՞ր պետական պաշտոնյան, հասարակական գործիչը կամ պետական մարմինը պետք է կայացնի պետական փողերը ծախսելու վերաբերյալ որոշումները,
- Ո՞ր պետական պաշտոնյան, հասարակական գործիչը կամ պետական մարմինը լավագույնս կարող է կայացնել այդ որոշումները,
- Որո՞նք պետք է լինեն պետական ծախսերի գերակայությունները,
- Արդյո՞ք բավարարված եք բյուջետային ծախսերի վերաբերյալ ներկայացվող տեղեկատվությամբ,
- Արդյո՞ք բյուջեի մասին ներկայացվող տեղեկատվության ընդլայնման կարիք կա,
- Ի՞նչ լրացուցիչ տեղեկատվության կարիք ունեք?
- Ինչպե՞ս պետք է օգտագործեք ստացված տեղեկատվությունը?
- և այլն:

3.2. Քաղաքացու Բյուջեի ձևաչափերը

Քաղաքացու բյուջեները կարող են մեծապես տարբեր լինել ըստ թիրախավորվածության, բովանդակության և ծավալի, ինչպես նաև ներկայացվել մի շարք եղանակներով ՝ սկսած պարզ գրքույկից մինչև համապարփակ զեկույց: Ստորև ներկայացված են Քաղաքացու բյուջեների օրինակներ, որոնք վկայում են տարբեր մոտեցումների և ոճերի փորձի մասին: Դրանք են՝

- Պորտալի ձևաչափ – Germany Citizens Budget (2020)
- Ծիծաղաշարժ ձևաչափ – Tanzania Citizens Budget (2018-2019)
- Պաստառի/գրաֆիկական ձևաչափ - Albania Citizens Budget (2019), Kyrgyz Republic Citizens Budget (2019), Peru Citizens Budget (2018), Nigeria Citizens Budget (2019), Philippines Citizens Budget (2018)
- Գրքույկի ձևաչափ - Indonesia Citizens Budget (2019),
- Ներկայացման/ppt. ձևաչափ - Dominican Republic Citizens Budget (2019),
- Թերթի ձևաչափ - South Africa Citizens Budget (2014),

- Համապարփակ զեկույցի ձևաչափ – Chile Citizens Budget (2017), Mexico Citizens Budget (2019), Burkina Faso Citizens Budget (2018), Ghana Citizens Budget (2019)

Համաձայն Միջազգային Բյուջետային Գործընկերություն (ՄԲԳ) կողմից իրականացվող Բաց բյուջեների հետազոտության՝ 2021 թվականին հետազոտության շրջանակներում դիտարկված 120 երկրների 73 տոկոսը կամ 88 երկիր հրապարակում են Քաղաքացու բյուջե[14]:

3.3. Երբ թողարկել Քաղաքացու Բյուջեն

Քաղաքացու բյուջեի կարևոր նպատակներից է քաղաքացիներին հնարավորություն տալ մասնակցել բյուջետային քննարկումներին, հետևաբար այն պետք է մշակվի այնպիսի ժամկետներում, որ նման մասնակցությունը դառնա հնարավոր: Այլ կերպ ասած, պետական բյուջեի նախագծի քաղաքացու տարբերակը պետք է հասանելի լինի միևնույն ժամանակ, երբ հրապարակվում է պետական բյուջեի նախագիծը: Նմանապես, Բյուջեի կատարման հաշվետվության հրապարակման հետ գրեթե զուգահեռ պետք է հրապարակվի նաև Բյուջեի կատարման մասին քաղաքացու ուղեցույցը:

Անշուշտ, բյուջետային ցիկլի տարբեր փուլերում կարող են մշակվել տարբեր պարզ փաստաթղթեր: Օրինակ՝ Միացյալ Նահանգների կառավարությունը բյուջեի կատարման հաշվետվության ուղեցույց է հրապարակում ֆինանսական տարվա վերջում: Այն երկրներում, որտեղ բյուջեն զգալիորեն փոփոխվում է օրենսդիր մարմնում քննարկումներից հետո, հաճախ քաղաքացիների համար ուղեցույցը մշակվում է բյուջեն օրենսդիր մարմնի կողմից ընդունվելուց հետո: Նման փաստաթղթերը պետք է դիտարկել որպես լրացումներ, և ոչ թե քաղաքացու բյուջեին փոխարինող փաստաթղթեր: Իրականում լավագույն փորձը դա **բյուջետային ցիկլի տարբեր փուլերում ուղեցույցների հրապարակումն է:**

Ուղեցույցը պետք է տարածվի միևնույն ժամանակ, երբ կառավարությունը օրենսդիր մարմին է ներկայացնում տարեկան բյուջեն, որպեսզի հասարակությունը կարողանա լիովին հասկանալ, թե ինչ է առաջարկվում և ժամանակ ունենա իրականացնել քննարկումներ, ազդեցություն ունենալ օրենսդիր մարմնում քննարկումների վրա: Լավագույն փորձը դա, երբ հասարակությունը հնարավորություն ունի ծանոթանալ բյուջեի նախնական տարբերակին, ապա նաև՝ ընդունումից հետո՝ հաստատված բյուջեին: Բացի քաղաքացու բյուջեի ուղեցույցից, շատ օգտակար է, եթե մշակվի և հրապարակվի նաև բյուջեի կատարման վերաբերյալ քաղաքացու ուղեցույց:

3.4. Ինչպես բաշխել Քաղաքացու Բյուջեն

Ուղեցույցը պետք է ակտիվ և լայնորեն տարածվի՝ օգտագործելով զանազան լրատվամիջոցներ: Քաղաքացիների ուղեցույցի հրապարակման նպատակն է տեղեկացնելու և ներգրավելու հանրությանը բյուջետային միջոցների հավաքագրման և ծախսման

[14] International Budget Partnership "Open Budget Survey 2021" Global Report.

գործընթացներում: Սա անշուշտ պահանջում է ինֆորմացիայի տարածման բազմազան գործիքների պրոակտիվ կիրառում: Տեղեկատվության պարզապես տեղադրումը համապատասխան պետական կայքերում կարող է քիչ օգտակար լինել:

4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՓՈՐՁԸ ՀՀ-ՈՒՄ

Վերջին տարիների ընթացքում Հայաստանում հանրային ֆինանսների կառավարման և, մասնավորապես, բյուջետային գործընթացում տեղի ունեցող բարեփոխումները նպաստել են հանրային տվյալների թափանցիկության և մատչելիության աճին: Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությամբ ևս որպես նպատակ ամրագրված է բյուջետային տեղեկատվության հասանելիության և հանրության իրազեկվածության բարձրացումը: Այդ նպատակով, շեշտադրվում է պետական բյուջեի հիմնական փաստաթղթին զուգահեռ պարզեցված (քաղաքացու) բյուջեի հասանելիությունը հանրության լայն շրջանակներին:

Բյուջետային տեղեկատվությունը հանրությանը ավելի պարզեցված ձևաչափով ներկայացնելու կառավարության փորձերը սկիզբ են առել 2018 թվականից, երբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առաջին անգամ մշակվեց և հրապարակվեց «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի կատարման մասին **պարզեցված հաշվետվությունը**»[15] և «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի **համառոտ ուղեցույցը**» [16]:

Արդեն 2020 թվականին «համառոտ ուղեցույցը» փոխարինվեց **«քաղաքացու բյուջե»**[17]-ով՝ նպատակ ունենալով ընդլայնել հանրային մասնակցությունը: «Քաղաքացու բյուջեի» 2020 թվականի փաստաթուղթը մշակվել է «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի» կողմից՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում: Քաղաքացու բյուջե փաստաթղթում ըստ առանձին ոլորտների և ուղղությունների ներկայացվում են ՀՀ կառավարության հիմնական պլանները և ծրագրերը, ծախսային գերակայությունները և ֆինանսավորման պլանային ցուցանիշները, ակնկալվող արդյունքները և հետևանքները, դրանց կատարողական ցուցանիշները: ՏԶՀԿ-ն փաստաթուղթը մշակելիս հիմք է ընդունել այն սկզբունքը, որ այն պետք է պարզեցված կերպով պատասխանի հետևյալ հիմնական հարցերին՝ կառավարությունը ***ի՞նչ քաղաքականություններ և ծրագրեր է պլանավորում իրականացնել առաջիկա բյուջետային տարում, որքա՞ն ռեսուրսներով և ի՞նչ արդյունքներ է ակնկալում ստանալ***:

[15] https://minfin.am/hy/page/hh_petakan_byujei_parzecvats_hashvetvutyun
[16] https://minfin.am/hy/page/2018_2019
[17] https://minfin.am/website/images/website/byuje_amsakan/Citizen%20Budget%202020-final.pdf

Թե՛ 2020 թվականի և թե՛ հետագայում՝ արդեն ՀՀ ՖՆ կողմից թողարկված ուղեցույցները հասանելի են ՀՀ ՖՆ կայքում՝ https://minfin.am/hy/page/2018_2019 :

Բյուջետային տեղեկատվության պարզեցված ներկայացման հաջորդ գործիքը, որը Հայաստանում կիրառվում է, **Ինտերակտիվ բյուջեի** համակարգն է: Վերջինս մշակվել է «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում և հնարավորություն է տալիս տեղեկանալ բյուջետային ծախսերի, եկամուտների և դեֆիցիտի տվյալ տարվա պլանային ցուցանիշների մասին: Ընտրելով տվյալներն ըստ բյուջետային դասակարգումների՝ գործառնական, գերատեսչական և տնտեսագիտական, հնարավոր է աղյուսակի տեսքով արտապատկերել բյուջետային տեղեկատվությունը և ներբեռնել Excel տարբերակով[18]: Այս ֆորմատով ինտերակտիվ բյուջեն հասանելի է ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջում:

Նկար 8. ՀՀ ինտերակտիվ բյուջեն աղյուսակի տեսքով



Աղբյուրը՝ http://budget.minfin.am:82/

Ինտրակտիվ բյուջեի քարտեզը վիզուալացված, գրաֆիկական տարբերակով կարելի է գտնել ՀՀ էկեկտրոնային կառավարման կայքէջում[19]: Այն հնարավորություն է տալիս տեսնել գործառնական դասակարգմամբ յուրաքանչյուր ոլորտի տվյալ տարվա պլանային ծախսերը և վերջինիս կառուցվածքում ծախսված ռեսուրսների մասնաբաժինը: Գրաֆիկական ներկայացումը թեև գործառնական դասակարգմամբ է, այնուամենայնիվ, քարտեզը հնարավորություն է տալիս տեղափոխվել բյուջետային կատեգորիաներով և վերջին մակարդակում տեսնել բյուջետային միջոցառման գերատեսչական դասակարգումը՝ միջոցառումն իրականացնող մարմիններին:

[18] http://budget.minfin.am:82/
[19] https://www.e-gov.am/interactive-budget/

Նկար 9. ՀՀ ինտերակտիվ բյուջեն գծապատկերի տեսքով



Աղբյուրը՝ https://www.e-gov.am/interactive-budget/

Քաղաքացիական հասարակության կողմից բյուջետային տեղեկատվության պարզեցման նախաձեռնությունները սահմանափակ են և դիսկրետ:

ՏԶՀԿ-ն դեռևս 2002-2006 թվականներին իրականացրել է պետական բյուջեի ընդհանուր տեղեկատվության, ինչպես նաև՝ սոցիալական ապահովագրության և ապահովության, առողջապահության և կրթության ոլորտային բյուջեների պարզեցման և տարածման նախաձեռնություններ: Վերջիններս իրականացվել են Օքսֆամ ՄԲ ֆինանսական աջակցությամբ՝ «Հայաստանի բյուջետային վերլուծությունների» ծրագրի շրջանակներում: Հետագայում 2014-2016 թվականների ընթացքում ՏԶՀԿ կողմից իրականացվել են Սոցիալական պաշտպանություն, Առողջապահություն և Գյուղատնտեսություն ոլորտների պարզեցված բյուջեների մշակման և հրապարակման աշխատանքներ, որոնք լայնորեն ընդունվել և կիրառվել են թե քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և թե պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների կողմից: Պարզեցված թվով 9 բյուջեները մշակվել են «Հայաստանում քաղաքականությունների բարելավմանն ուղղված երկխոսություն և քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնում» ծրագրի շրջանակներում՝ ԵՄ ֆինանսական աջակցությամբ:

Նկար 10. Հատվածներ ՏԶՀԿ կողմից մշակված պարզեցված բյուջեներից, 2002-2016 թվականներ







2021 թվականին ՏԶՀԿ-ն կրկին ԵՄ ֆինանսական աջակցությամբ, այս անգամ արդեն «Աղքատության նվազեցում համայնքներում. կիրառական մոտեցումներ» ծրագրի շրջանակներում նախաձեռնեց մարզային բյուջետային տեղեկատվության ամփոփման և պարզեցված ներկայացման աշխատանքներ, ինչը ֆորմատային իմաստով նախադեպը չուներ, քանի որ հանդիսանում են ընտրված մարզերի (Լոռի, Շիրակ, Տավուշ) բոլոր համայնքների բյուջետային տեղակատվությունը ամփոփող զեկույցներ, միաժամանակ ներառելով նաև տեղեկատվություն կառավարության կողմից/պետական բյուջեից կոնկրետ մարզերում իրականացող լոկալ, այսինքն՝ ոչ հանրապետական նշանակության ծրագրերը և միջոցառումները: Զեկույցները հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://www.edrc.am/community-poverty-reduction-know-how-european-union-january-2021-present/:

Նկար 11. Հատվածներ ՏԶՀԿ կողմից մշակված Շիրակի մարզի բյուջետային քաղաքականությունների ամփոփագրից, 2021 թվական

• ՀԲ աջակցությամբ իրականացվող **Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի** շրջանակներում Շիրակի մարզում իրականացվել են համայնքների ջրագծերի, առողջապահության, կրթության, մշակույթի, հատուկ խնամքի և ենթակառուցվածքների ոլորտի վերականգնման և շինարարության աշխատանքներ:

Միկրոծրագիր	Բնակավայր	Իրականացման կարգավիճակը
Մանկապարտեզի վերակառուցում	Այգաբաց	Իրականացված է
	Անուշավան	Իրականացված է
	Արևիկ	Իրականացված է
	Գյումրի («Արևիկ» մանկապարտեզ)	Իրականացված է
	Գյումրի («Հանգակ» մանկապարտեզ)	Ընթացքում է
Մանկապարտեզի կառուցում	Գյումրի («Նանուչիկ» մանկապարտեզ)	Իրականացված է
	Հոռոմ	Ընթացքում է
Մանկապարտեզի հիմնանորոգում/վերանորոգում	Սպանդարյան	Իրականացված է
	Ոսկեհասկ	Իրականացված է
	Փանիկ	Ընթացքում է
Դպրոցի կառուցում	Պեմզաշեն	Իրականացված է
	Վարդաքար	Իրականացված է
	Կրասար	Իրականացված է
Դպրոցի վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում	Հայկաձոր	Իրականացված է
Դպրոցի մարզադահլիճի վերակառուցում, կառուցում	Փանիկ	Իրականացված է
	Հառիճ	Իրականացված է
Խմելու ջրի նոր ջրատարի կառուցում	Ջաջուռ	Իրականացված է
Խմելու ջրի արտաքին համակարգի վերակառուցում	Լեռնակերտ	Իրականացված է
Ոռոգման համակարգի վերանորոգում	Ամասիա	Ընթացքում է
Հողմիկ, Գոգիովիտ, Թորոսգյուղ, Ցողամարգ բնակավայրերի ոռոգման ինքնահոս համակարգի կառուցում և վերանորոգում	Սարապատ	Ընթացքում է

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

Գծապատկեր 30. Պետական բյուջեից ՇՄ համայնքներին տրամադրված սուբվենցիաների բաշխումն ըստ համայնքների և ուղղությունների, մլն դրամ, 2019-2020թթ.

	Ճանապարհների կառուցում/նորոգում	Մեքենասարքավորումների ձեռքբերում	Մանկապարտեզների կառուցում/նորոգում	Հասարակական շենքերի (կառուցում/վերանորոգում	Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	Խմելու, ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում	Շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում	Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	Հակակարկտային կայանների ձեռքբերում	Բնակավայրերի գազաֆիկացում	Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում	Ընդամենը, մլն դրամ	Ընդամենը, տոկոս
Ազատան	52.1								18.2				70.3	3.2
Ախուրյան	72.0		12.2	13.4									97.6	4.4
Ամասիա							10.7			5.3			15.9	0.7
Անի	52.3	25.6					38.9		28.4	23.1			178.4	8.1
Անուշավան							9.8					4.3	14.1	0.6
Աշոցք	47.6	2.3		5.1			5.5						60.5	2.7
Առափի	26.5					15.4							41.9	1.9
Արևշատ				2.1			15.4						17.4	0.8
Արթիկ	23.2						16.8						40.0	1.8
Արփի						8.2							8.2	0.4
Բայանդուր				17.0	17.8						120.4		155.2	7.1
Գեղանիստ			3.9										3.9	0.2
Գետք	12.4				5.5		4.0						21.8	1.0
Գյումրի	594.5	271.3		28.3								28.9	922.9	41.9
Երազգավորս	30.8				18.2								49.0	2.2
Լեռնակերտ				4.9			3.3		7.0				15.2	0.7
Լուսակերտ	7.8				8.3								16.2	0.7
Հայկավան										3.2			3.2	0.1
Հառիճ	9.0												9.0	0.4
Հոռոմ	24.2								19.4				43.6	2.0
Ղարիբջանյան							8.5			3.0			11.5	0.5
Մարմաշեն		41.2	106.8	23.7			6.0	6.6		13.7			197.9	9.0
Մեծ Մանթաշ							10.0		4.8				14.8	0.7
Մեղրաշեն				27.7									27.7	1.3
Նոր Կյանք	21.7						6.0						27.8	1.3
Ոսկեհասկ		10.4											10.4	0.5
Պեմզաշեն	11.6								8.6				20.2	0.9
Սարալանջ							7.8		2.9				10.7	0.5
Սարապատ		25.3				10.4				8.4			44.0	2.0
Սարատակ	9.0												9.0	0.4
Սպանդարյան							6.2						6.2	0.3
Փանիկ	5.6			11.7			8.8						26.2	1.2
Փոքր Մանթաշ	10.1												10.1	0.5
Ընդամենը, մլն դրամ	1,020.6	376.0	122.9	133.8	49.7	34.0	157.8	6.6	89.2	56.6	120.4	33.2	2,200.8	-
Ընդամենը, տոկոս	46.4	17.1	5.6	6.1	2.3	1.5	7.2	0.3	4.1	2.6	5.5	1.5	-	100.0

Աղբյուր՝ ՀՀ կառավարության որոշումներ և ՏԶՀԿ հաշվարկներ

Առանձին համայնքային բյուջեների մակարդակում քաղաքացու կամ պարզեցված բյուջետային փաստաթղթերի ներկացման նախադեպեր գրեթե չկան: Այս դեպքում բյուջետային տեղեկատվության պարզեցված ներկայացվում է հիմնականում ինտերակտիվ բյուջեների միջոցով, այն էլ խիստ սահմանափակ թվով համայնքներում՝

- Երևան քաղաքի ինտերակտիվ բյուջե www.budget.yerevan.am
- Գորիս համայնքի ինտերակտիվ բյուջե www.gorisbudget.am

2023 թվականին ՀՀ ՏԿԵՆ նախաձեռնությամբ և ԳՄՀ «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի ֆինանսական աջակցությամբ իրականացվում են խոշորացված համայնքների բյուջետային տեղեկատվության պարզեցված

ներկայացման փորձեր՝ պաստառների ձևաչափով: Աբովյան, Աշտարակ, Արմավիր և Ջերմուկ խոշորացված համայնքների դեպքում դրանք արդեն իրականություն են: Ստորև նկարում ներկայացված է Աբովյան համայնքի 2023 թվականի բյուջեն:

Նկար 12. Աբովյան համայնքի 2023 թվականի քաղաքացու բյուջեի պաստառը

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պասիվ են նաև համայնքային մակարդակում: Առկա են սահմանափակ դեպքեր, երբ քաղաքացիական հասարակության կառույցների կողմից իրականացվել են որևէ համայնքի բյուջետային տեղեկատվության պարզեցումներ: Վերջին տարիների որոշ օրինակներ բերված են ստորև.

- Հայաստանի քաղաքային համայնքների բյուջեների պարզեցված/ինտերակտիվ ներկայացում[20], 2014-2018 թվականներ, ներկայացվել է urbanista.am հարթակում «Լրագրողներ հանուն քաղաքների զարգացման» ՀԿ-ի կողմից,

- Արենի համայնքի քաղաքացու բյուջե[21], 2019 թվական, մշակվել է ՎԻՆՆԵԹ Հայաստան կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի կողմից:

[20] https://urbanista.am/interactivebudget
[21] http://surl.li/hnmkt

5. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀՀ-ՈՒՄ

Պետական բյուջեի մասին տեղեկատվության հանրային հասանելիությունը, բյուջետային գործընթացին հանրային մասնակցությունը և բյուջետային վերահսկողություն իրականացնող ինստիտուտների դերը գնահատելու և միջազգային համադրումներ ապահովելու նպատակով ՄԲԳ կողմից յուրաքանչյուր տարի իրականացվում է Բաց բյուջեների հետազոտությունը[22]: Հետազոտության արդյունքում ինդեքսավորված գնահատականներ են տրվում հետազոտությունում ներառված երկրներին՝ ըստ 3 բաղադրիչների՝ Թափանցիկություն, Հանրային մասնակցություն և Բյուջեի վերահսկողություն:

2021 թվականի Բաց բյուջեների հետազոտության արդյունքներով Հայաստանի թափանցիկության ցուցանիշը 61 է (0-100 սանդղակով), ինչը բավականին բարձր է և թույլ է տալիս երկիրը դասել բյուջետային «բավարար թափանցիկություն» ունեցող երկրների շարքում:

Գծապատկեր 3. Բաց բյուջեների հետազոտության թափանցիկության գնահատականի համեմատական, Հայաստան և այլ երկրներ



Աղբյուրը՝ Բաց բյուջեների հետազոտություն (https://internationalbudget.org/open-budget-survey/rankings)

Թափանցիկությունը գնահատում է ութ հիմնական բյուջետային փաստաթղթերի այդ թվում Քաղաքացու բյուջեի, առցանց հասանելիությունը, ժամանակին հրապարակումը և համապարփակությունը: Այդ փաստաթղթերը ներկայացված են Աղյուսակ 2-ում:

[22] https://internationalbudget.org/open-budget-survey

Աղյուսակ 2. Բաց բյուջեների հետազոտության Հայաստանիի թափանցիկության գնահատականի բացվածքն ըստ առանձին բաղադրիչների

Բյուջետային փաստաթուղթ	Գնահատման բյուջետային տարի	Փաստաթղթի բովանդակության գնահատական (0-100)
Նախաբյուջետային ուղերձ (ՄԺԾԾ)	2021	100
Գործադիրի բյուջետային առաջարկ (պետական բյուջեի նախագիծ)	2021	63
Հաստատված բյուջե	2021	89
Քաղաքացու բյուջե	2020	Հրապարակվել է ուշ
Եռամսյակային կատարման հաշվետվություններ	2020	85
Կիսամյակային հաշվետվություն	2020	Չի պատրաստվում
Պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն	2019	74
Պետական բյուջեի կատարման վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի եզրակացություն	2019	48

Աղբյուրը՝ Բաց բյուջեների հետազոտություն (https://internationalbudget.org/sites/default/files/country-surveys-pdfs/2021/open-budget-survey-armenia-2021-en.pdf)

Համեմատության համար նշենք, որ հետազոտության մյուս բաղադրիչների մասով Հայաստանն արձանագրել է ավելի ցածր մակարդակներ. մասնակցության ցուցանիշը 6 է, իսկ բյուջետային վերահսկողության գնահատականը՝ 50 :

Գծապատկեր 4. Բաց բյուջեների հետազոտության մասնակցության գնահատականի համեմատական, Հայաստան և այլ երկրներ



Գծապատկեր 5. Բաց բյուջեների հետազոտության վերահսկողության գնահատականի համեմատական, Հայաստան և այլ երկրներ



Աղբյուրը՝ Բաց բյուջեների հետազոտություն (https://internationalbudget.org/wp-content/uploads/Open-budget-survey-2021-1.pdf)

Նկարների ցանկ

Նկար 1. Հարկաբյուջետային տվյալների պորտալներում տարածաշրջանային բյուջեների համեմատության օրինակներ 7
Նկար 2. Արագոնի ինքնավար հանրապետության բյուջետային ծախսերի ներկայացումն ըստ առանձին դասակարգումների 9
Նկար 3. Կորեայի բաց հարկաբյուջետային տվյալների պորտալը 12
Նկար 4. Կորեայի քաղաքացիների մասնակցության պորտալը 13
Նկար 5. ԱՄՆ-ի կառավարության ծախսերի տվյալների պորտալի «Explorer» գործիքը 15
Նկար 6. ԱՄՆ ֆիսկալ տվյալների պորտալը 16
Նկար 7. Ինդոնեզիայի Ազգային բյուջեի տվյալների պորտալը 17
Նկար 8. ՀՀ ինտերակտիվ բյուջեն աղյուսակի տեսքով 23
Նկար 9. ՀՀ ինտերակտիվ բյուջեն գծապատկերի տեսքով 24
Նկար 10. Հատվածներ ՏՋՀԿ կողմից մշակված պարզեցված բյուջեներից, 2002-2016 թվականներ 24
Նկար 11. Հատվածներ ՏՋՀԿ կողմից մշակված Շիրակի մարզի բյուջետային քաղաքականությունների ամփոփագրից, 2021 թվական 25
Նկար 12. Աբովյան համայնքի 2023 թվականի քաղաքացու բյուջեի պաստառը 27

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. Բյուջետային տեղեկատվության հիերարխիկ կառուցվածքով ներկայացնելու օրինակ 10
Գծապատկեր 2. Բյուջետային տեղեկատվության ըստ ժամանակագրության ներկայացման օրինակ 10
Գծապատկեր 3. Բաց բյուջեների հետազոտության թափանցիկության գնահատականի համեմատական, Հայաստան և այլ երկրներ 28
Գծապատկեր 4. Բաց բյուջեների հետազոտության մասնակցության գնահատականի համեմատական, Հայաստան և այլ երկրներ 29
Գծապատկեր 5. Բաց բյուջեների հետազոտության վերահսկողության գնահատականի համեմատական, Հայաստան և այլ երկրներ 29

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Հարկաբյուջետային տվյալների պորտալի կառուցվածքը 12
Աղյուսակ 2. Բաց բյուջեների հետազոտության Հայաստանիի թափանցիկության գնահատականի բացվածքն ըստ առանձին բաղադրիչների 29

Օգտագործված գրականություն

- «ՀՀ 2024թ. բյուջետային գործընթացը սկսելու մասին» ՀՀ վարչապետի թիվ 86-Ա որոշում, 26.01.2023թ.
- «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, 08.12.2022թ.:
- ՀՀ 2024-2026 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների կողմից քաղաքացու բյուջեի ոլորտային նախագծերի կազմման մեթոդական ցուցումներ
- «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1716-Լ որոշում, 28.11.2019թ.
- Gigler et al. “Technologies for Transparency and Accountability: Implications for ICT policy and Implementation”, 2011
- International Budget Partnership “Open Budget Survey 2021” Global Report
- International Budget Partnership “The Power of Making It Simple: A Government Guideto Developing Citizens Budget”, 2012
- Lucy Chambers, Velichka Dimitrova and Rufus Pollock “Technology for Transparent and Accountable Public Finance (TTAPF)”, Open Knowledge Foundation, May 2012
- Lämmerhirt, D. “Making budgets attractive – Best practices from governments’ financial transparency portals”. Sankt Augustin, Germany: OpenBudgets.eu
- Ministry of the Interior, Republic of Korea, “Korea, Leading the world -Government”, Introduction and Analysis on Best Practice
- Open Budgeting Practices in the Asia and Pacific Region, April 2021.

Առցանց ռեսուրսներ

- https://minfin.am/
- https://internationalbudget.org/
- https://www.openspending.org/
- https://fiscaltransparency.net/
- https://www.oidp.net/docs/repo/doc636.pdf
- https://urbanista.am/interactivebudget

Հարկաբյուջետային պորտալներ

- ԵՄ (ֆոնդեր)՝ https://cohesiondata.ec.europa.eu/
- ԵՄ (գյուղատնտեսական սուբսիդիաներ)՝ https://farmsubsidy.org/
- ՏՀԶԿ՝ https://publicfinance.oecd.org/
- ՀՀ ինտերակտիվ բյուջե (աղյուսակ)՝ http://budget.minfin.am:82/
- ՀՀ ինտերակտիվ բյուջե (գծապատկեր)՝ https://www.e-gov.am/interactive-budget/
- Երևան քաղաքի ինտերակտիվ բյուջե՝ www.budget.yerevan.am

- Գորիս համայնքի ինտերակտիվ բյուջե՝ www.gorisbudget.am
- Կորեա (Բաց կառավարության տվյալներ)՝ http://www.data.go.kr/
- Կորեա (հարկաբյուջետային տվյալների պորտալ)՝ https://www.openfiscaldata.go.kr/
- Կորեա (մասնակցության պորտալ)՝ https://www.epeople.go.kr/index.jsp
- Արագոնի ինքնավար հանրապետության՝ https://presupuesto.aragon.es/
- ԱՄՆ՝ https://www.usaspending.gov/
- Ինդոնեզիա՝ https://data-apbn.kemenkeu.go.id/
- Մեքսիկա՝ https://www.datos.cdmx.gob.mx/
- Ծուկումա/Ճապոնիա՝ https://tsukubashi.spending.jp/
- Նյու Յորք՝ https://opendata.cityofnewyork.us/
- Քենյա՝ https://kenya.opendataforafrica.org/
- Բրիտանական կոլումբիա/Կանադա https://catalogue.data.gov.bc.ca/
- Ալբանիա՝ https://spending.data.al/

Քաղաքացու բյուջեի ձևաչափեր

- ՀՀ (2020)՝ https://minfin.am/website/images/website/byuje_amsakan/Citizen%20Budget%202020-final.pdf,
- Ֆիլիպիններ (2021)՝ https://internationalbudget.org/wp-content/uploads/philippines-2021-budget-framework.pdf,
- Դոմինիկյան Հանրապետություն (2019)՝ https://internationalbudget.org/wp-content/uploads/dominican-republic-2019-citizens-budget.pdf,
- Գերմանի (2020)՝ https://www.bundeshaushalt.de/DE/Home/home.html,
- Տանզանիա(2018-2019)՝ https://internationalbudget.org/wp-content/uploads/tanzania-2018-2019-citizens-budget.pdf,
- Ալբանիա (2019)՝ https://internationalbudget.org/wp-content/uploads/albania-2019-citizens-budget.pdf,
- Ղազախստան (2019)՝ https://internationalbudget.org/wp-content/uploads/kyrgyz-republic-graphical-report-1-scaled.jpg
- Պերու (2018)՝ Peru Citizens Budget ,
- Նիգերիա՝ (2019) https://internationalbudget.org/wp-content/uploads/nigeria-2019-citizens-budget.pdf ,
- Ֆիլիպիններ (2018)՝ https://internationalbudget.org/wp-content/uploads/philippines-2018-citizens-budget-1.pdf ,
- Ինդոնեզիա (2019)՝ https://internationalbudget.org/wp-content/uploads/indonesia-2019-citizens-budget.pdf,
- Դոմինիկյան Հանրապետություն (2019)՝ https://internationalbudget.org/wp-content/uploads/dominican-republic-2019-citizens-budget.pdf,
- Հարաֆային Աֆրիկա (2014)՝ https://www.internationalbudget.org/wp-content/uploads/south-africa-citizens-budget-2014.pdf,
- Չիլի (2017)՝ https://internationalbudget.org/wp-content/uploads/chile-2017-citizens-budget.pdf ,
- Մեքսիկա (2019)՝ https://internationalbudget.org/wp-content/uploads/mexico-2019-citizens-budget.pdf,
- Բուրկանա Ֆասո (2018)՝ https://internationalbudget.org/wp-content/uploads/burkina-faso-2018-citizens-budget.pdf,
- Գանա (2019)՝ https://internationalbudget.org/wp-content/uploads/ghana-2019-citizens-budget.pdf:

Տնտեսական զարգացման և
հետազոտությունների կենտրոն (EDRC)
+374(0) 55 540 289
info@edrc.am
www.edrc.am